ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ԾԱԿԱՏՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի նախագահին,

Փարիզ:

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը, որ գումարվել է Վիեննայում, կոչով դիմում է Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեային, հասարակական կարծիքին և աշխարհի ժողովուրդներին:

Վերջին ամիսների միջազգային իրադրության սրումը առաջ է բերում բոլոր երկրների ողամարդկանց և կանանց տագնապն ու անհանգստությունը: Ամեն ոք ցանկանում է, որպեսզի հինգ մեծ տերությունները, որոնք ամբողջ աշխարհում խաղաղության համար պատասխանատու են Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության դրույթների հիման վրա, ինչպես նաև իրենց հզորության շնորհիվ, բանակցություններ սկսեն և համաձայնության հասնեն: Ուստի և համաշխարհային հասարակական կարծիքի աչքում այն կամպանիան, որը Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը մղում է հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելու համար, արդարացված է իրադարձությունների ընթացքում և ներկայումս այլ մեթոդների ապարդյունությամբ:

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի ուշադրությունը հրավիրում է հատկապես հետևյալ մոմենտների վրա.

1. Խաղաղությունը և միջազգային համագործակցությունը չեն կարող լինել ամբողջ աշխարհին այն որոշումները պատրաստելու հետևանք, որ ընդունվել են անդամ-պետությունների մեծամասնության կողմից, որոնք ընդամին շատ հաճախ ներկայացնում են մարդկության փոքրամասնությունը: Միայն բանակցությունների և հաշտեցման միջոցով կարող են ձեռք բերվել ամբողջ աշխարհի խաղաղ զարգացման համար անհրաժեշտ համաձայնություններ:

Քանի որ նույնպիսի համաձայնություններ պետք է տարածվեն մասնավորապես Ասիայի վրա, ապա արդարացիության նկատառումները և միջազգային խաղաղության ռեալ գնահատումը պահանջում են Միավորված Ազգերի Կազմակերպության մեջ ընդունել Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարությանը:

2. Արտաքին գործերի շուրջ մինիստրների տեղակալների խորհրդակցության ձախողումը, ինչպես նաև Վաշինգտոնում և Օտտավայում Ատլանտյան դաշինքի խորհրդի 6-րդ սեսիայում կնքված համաձայնագրերը դժվարացնում են զինաթափման ասպարեզում բոլոր միջոցառումները, հնարավորություն չեն տալիս գերմանական ժողովրդին, որ ինքը լուծի իր միասնությունը վերականգնելու հարցը, և ուժեղացնում են պատերազմի վտանգը Եվրոպայում: Մեծ տերությունների միջև բանակցությունները կարող են զգալիորեն ավելի արագ հանգեցնել միավորված, դեմոկրատական և ապառազմականացված Գերմանիայի ստեղծմանը: Հարցի այդպիսի լուծումը միաժամանակ համապատասխանում է գերմանական ժողովրդի հսկայական մեծամասնության ցանկությանը, Գերմանիայի հարևանների շահերին, ինչպես նաև խաղաղության շահերին:

Ուստի խաղաղության Համաշխարհային խորհուրդը Միավորված Ազգերի Կազմակերպությանը կոչ է անում օգտագործել իր ազդեցությունը Գերմանիայի զինաթափման հարցի վերաբերյալ միջազգային համաձայնագրերի պահպանմանը հասնելու և հաշտության պայմանագրի կնքումն արագացնելու համար, պայմանագիր, որը հնարավոր դարձնի օկուպացիոն զորքերի դուրս բերումը և միավորված ու ապառազմականացված Գերմանիայի վերականգնումը:

3. Խաղաղության վերականգնումը Ասիայում շոշափում է ամբողջ մարդկության շահերը: Այդ խաղաղության վերականգնման հնարավորությանը լուրջ վնաս հասցվեց Սան-Ֆրանցիսկոյում Ճապոնիայի հետ կնքված պայմանագրերով, այդ վերականգնումը ենթադրում է ոչ միայն ներկայումս տեղի ունեցող բոլոր պատերազմական գործողությունների դադարեցումը, և ամենից առաջ Կորեայում, զինադադարի վերաբերյալ համաձայնություններ կընդունելու միջոցով, այլ նաև Ասիայի ժողովուրդների անկախության և տերիտորիալ ամբողջականության իրավունքի ապահովումը առանց օտարերկրյա որևէ միջամտության:

4. Խաղաղության պահպանումը Միջին Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում չի կարող բավարար չափով ապահովված լինել այն համաձայնագրերն ու դրույթները ուժի մեջ թողնելու միջոցով, որոնք հակասում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքին: Եգիպտոսի, Իրանի, Մարոկկոյի և Մերձավոր ու Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի մյուս բոլոր երկրների ժողովուրդների իրավունքը՝ ինքնուրույն կերպով վարելու և լուծելու իրենց գործերը, առանց օտարերկրյա ճնշման կամ միջամտության, և առանց բացահայտ կամ քողարկված ռազմական օկուպացիայի ենթարկվելու, պետք է ճանաչվի, և այն էլ գործուն կերպով:

5. Սպառազինությունների մրցավազքը ժողովուրդներին կարող է բերել միայն անխուսափելի կրախ և մարդկության համար կործանարար պատերազմի սպառնալիք: Ուստի և անհրաժեշտ է կանգնել միաժամանակյա, պրոգրեսիվ և գործուն կերպով վերահսկվող զինաթափման ուղու վրա:

Այդպիսի զինաթափմամբ, մասնավորապես, պետք է նախատեսվի ատոմային զենքի և մասսայական ոչնչացման մյուս միջոցների արգելումը, որոնց

կիրառումը դատապարտված է հանրահանաչ բարոյականությամբ: Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը կոչ է անում Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեային՝ քննարկման դնել զինաթափման վերաբերյալ Վիեննայում այսօր, 1951 թվականի նոյեմբերի 6-ին, ընդունված առաջարկը: Այդ առաջարկը չի կարող ոչ մի պարագայում հանգեցնել հավասարակշռության խախտման՝ հօգուտ և ի վնաս այս կամ այն պետության: Վերահսկողության խիստ սիստեմի օգնությամբ, որը նախատեսվում է դրանով, այդ առաջարկը երաշխավորում է բոլորի անվտանգությունը զինաթափման յուրաքանչյուր ստադիայում:

Տվյալ փաստաթղթին մենք կցում ենք Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կողմից ընդունված առաջարկը՝ զինաթափման վերաբերյալ:

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը համոզված է, որ պատերազմն անխուսափելի չէ և որ զանազան քաղաքական ու սոցիալական ռեժիմների խաղաղ գոյակցությունը հնարավոր է, և որ իր առաջարկները համապատասխանում են ամբողջ մարդկության շահերին:

Բարեհաճեցեք ընդունել, պարոն նախագահ, մեր կատարյալ հարգանաց հավաստիքը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԴԻՄՈՒՄԸ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մենք, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներս, որ հավաքվել ենք Մոսկվայում, Խաղաղության կողմնակիցների երրորդ կոնֆերանսին, ջերմորեն ողջունում ենք մեր Հայրենիքի սահմաններից դուրս խաղաղության պաշտպանության մեծ շարժման մասնակիցներին:

Խաղաղության լագերի ուժերը օր ավուր անշեղորեն աճում և ամրապնդվում են: Գիտակցելով նոր համաշխարհային պատերազմի ռեալ սպառնալիքը, խաղաղության ակտիվ պաշտպանների շարքերն են մտնում բոլոր ազնիվ մարդիկ՝ առանց նրանց սոցիալական, քաղաքական կամ կրոնական պատկանելիության տարբերության:

Խաղաղության կողմնակիցների շարժումը դարձել է արդիականության մեծագույն ժողովրդական շարժումը:

Դրա փայլուն վկայությունն է այն անվիճելի հաջողությունը, որ ունեցան մարդկության պատմության մեջ չտեսնված միջազգային երկու հանրաքվեները՝ ստորագրությունների հավաքումը ատոմային զենքի արգելման վերաբերյալ Ստոկհոլմի Կոչի տակ, որ ստորագրեցին ավելի քան 500.000.000 մարդ, և հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումի տակ ստորագրությունների հավաքման՝ ներկայումս անցկացվող կամպանիան, գիտում, որը արդեն ստորագրել են մոտ 600.000.000 մարդ:

Սովետական մարդիկ հաստատակամորեն պայքարում են խաղաղության համար, որովհետև ագրեսիվ պատերազմը համարում են ամենածանր հանցագործությունը մարդկության հանդեպ, ամենամեծ աղետը աշխարհի հասարակ մարդկանց համար: Ավելի քան 117.000.000 սովետական քաղաքացիներ, ստո-

բագրելով խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային խորհրդի Դիմումը, հայտարարեցին, որ իրենք ցանկանում են հաշտ ու բարեկամաբար ապրել ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և աշխարհի մյուս բոլոր երկրների ժողովուրդների հետ:

Մենք հպարտանում ենք նրանով, որ մեր երկիրը հանդիսանում է խաղաղության հուսալի պատվարը, որ խաղաղության և ժողովուրդների սուվերենության համար մղվող պայքարը կազմում է սովետական պետության արտաքին քաղաքականության գլխավոր բովանդակությունը:

1951 թվականի մարտին ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընդունած խաղաղության պաշտպանության օրենքով Սովետական Միությունում պատերազմի պրոպագանդան դիտվում է որպես քրեական ծանր հանցագործություն:

Սովետական ժողովուրդը ջերմ հավանություն է տալիս և միահամուռ կերպով պաշտպանում է սովետական կառավարության խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը, որը բազմիցս հայտարարել է, որ նա հնարավոր է համարում տարբեր տնտեսական սիստեմների ու իդեոլոգիաների պատկանող պետությունների խաղաղ գոյակցությունը:

Մենք չենք վախենում կապիտալիզմի հետ խաղաղ մրցակցությունից, բայց մեզ համար սարսափելի չեն նաև իմպերիալիստական ագրեսորների մեքենայությունները: Չկա աշխարհում այնպիսի ուժ, որը կարողանա մեր ժողովրդին ստիպել ետ դառնալ կոմունիստական հասարակության կառուցման ուղուց:

Սովետական ժողովուրդը աչալուրջ կերպով հետևում է խաղաղության թշնամիների մեքենայություններին և պատրաստ է անձնվեր արիությամբ ու հերոսությամբ պաշտպանել իր Հայրենիքը, պաշտպանել իր խաղաղ աշխատանքը բոլոր նրանցից, ովքեր կհամարձակվեն ոտնձգություն կատարել իր ազատության և անկախության դեմ:

Սովետական ժողովուրդն իր բոլոր ջանքերն ուղղում է ժողովրդական տնտեսության, գիտության, կուլտուրայի և արվեստի հետագա զարգացմանը: Մեր երկրում մեծ Ստալինի նախաձեռնությամբ վիթխարի աշխատանքներ են կատարվում բնությունը վերափոխելու ուղղությամբ, կառուցվում են հսկայական հիդրոէլեկտրակայաններ և ոռոգման ջրանցքներ, նոր ֆաբրիկաներ, գործարաններ, բնակելի տներ, դպրոցներ, հիվանդանոցներ, ակումբներ, մանկապարտեզներ: Ժողովրդական տնտեսության վերելքի հետ միասին անընդհատ աճում է նաև սովետական մարդկանց բարեկեցությունը:

Միլիոնավոր սովետական մարդիկ բաժանում են բոլոր երկրների հասարակ մարդկանց տագնապը նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքի կապակցությամբ, որին ծարավի են, առաջին հերթին, ամերիկյան և անգլիական լկտիացած ռեակցիոներները ու ֆինանսական մագնատները, որոնք պատերազմի մեջ տեսնում են հարստանալու և հսկայական գերշահույթներ ստանալու գլխավոր աղբյուրները: Ահա արդեն համարյա մեկ ու կես տարի է, ինչ ԱՄՆ-ի կառավարող շրջանները զավթողական, ավերիչ պատերազմ են մղում ազատասեր կորեական ժողովրդի դեմ: Լկտիաբար ոտնահարելով նախկինում կնքված բոլոր միջազգային համաձայնագրերը, ամերիկյան ռեակցիոներները բնդլայնում են ագրեսիվ Ատլանտյան բլոկը, նոր ռազմական բազաներ են ստեղծում աշխարհի բոլոր մասերում ու տենդագին թափով ուժեղացնում են սպառազինությունների մրցավազքը և ատոմային զենքով պատերազմ մղելու նախապատրաստությունը: Այդ նույն նպատակներով նրանք Միավոր-

ված Ազգերի Կազմակերպությունը վերածում են պատերազմի գործիքի, վերածնում ֆաշոնական և գերմանական միլիտարիզմը: Ամերիկյան ռեակցիոն մամուլն ու ռադիոն օրավուր մղում են սանձարձակ, ստահոդ, հակասովետական պրոպագանդա, ցցելով բշնամանք բուրժուական Սովետական Միությունը, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան և ժողովրդական դեմոկրատիայի երկրները: Ատլանտյան բլոկի մեջ մտցված երկրների ժողովուրդները շնչահեղձ են լինում ռազմական բյուջեների, հարկերի ու բանկության բեռի տակ:

Պատերազմի վտանգի անման պայմաններում առաջնակարգ նշանակություն ունի խաղաղության պահպանման կամպանիայի հետագա բեղայնումը, ժողովուրդների զգոնության բարձրացումը պատերազմի հրձիգների հանցավոր մեքենայությունների նկատմամբ:

Խաղաղության կողմնակիցների Վարշավայի Համաշխարհային երկրորդ կոնգրեսից հետո անցած մեկ տարվա ընթացքում խաղաղության ուժերը բոլոր երկրներում էլ ավելի համախմբվեցին և աճեցին: Բոլոր հասարակ մարդկանց սրտերին նոր եռանդ ներշնչեց, խաղաղության գործի հաղթանակի նկատմամբ նրանց մեջ հավատն ամրապնդեց խաղաղության մեծ դրոշակակիր Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի կոչը՝ «Խաղաղությունը կպահպանվի և կամրապնդվի, եթե ժողովուրդները խաղաղության պահպանման գործը վերցնեն իրենց ձեռքը և այն պաշտպանեն մինչև վերջ»:

Այդ իմաստուն ու պարզ միտքը, որը համապատասխանում է, ամբողջ աշխարհի միլիոնավոր մարդկանց կենսական շահերին, բափանցեց աշխարհի բոլոր երկրների ժողովրդական ամենալայն մասսաների սրտի խորքը: Եվ խաղաղությունը պաշտպանելու համար այժմ ոտքի են կանգնում երկրագնդի բոլոր մարդիկ, բոլոր ազգությունների ու համոզմունքների տղամարդիկ ու կանայք, պատանիներն ու ծերերը, բոլորը, ում համար ատելի է պատերազմը: Երանք օրավուր ավելի ու ավելի ակտիվորեն են պայքարում իմպերիալիստական ագրեսորների կողմից կատարվող պատերազմի նախապատրաստության դեմ, վճռականորեն ձախողում նրանց շարանենգ դիտավորությունները:

Մենք, Խաղաղության կողմնակիցների Համամիութենական կոնֆերանսի դելեգատները, արտահայտելով բազմամիլիոն սովետական ժողովրդի կամքը, ջերմ հավանություն ենք տալիս և ամեն կերպ պաշտպանում ենք խաղաղության համար հետագա պայքարի այն ծրագիրը, որ հաչակեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Վիեննայի սեսիան: Այդ ծրագիրը հասկանալի և մոտ է յուրաքանչյուր սովետական մարդու սրտին: Այն արտահայտում է երկրագնդի բնակչության հսկայական մեծամասնության կենսական պահանջները:

Մենք հայտարարում ենք, որ այսուհետև ևս կպայքարենք պատերազմի հրձիգների մեքենայությունների դեմ, ամբողջ աշխարհում կայուն ու երկարատև խաղաղության համար:

Կեցցե՞ խաղաղության համար մարտնչողների մեծ շարժումը:

Կեցցե՞ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեն հանրագումարի է բերել հինգ մեծ տերությունների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Սովետական Միության, Չինական Ժողովրդական Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային խորհրդի Դիմումի տակ ՍՍՌՄ-ում անցկացվող ստորագրությունների հավաքման կամպանիայի արդյունքները։

Կամպանիայի արդյունքները վկայում են խաղաղության Համաշխարհային խորհրդի Դիմումը սովետական ժողովրդի կողմից միահամուռ կերպով պաշտպանելու մասին, սովետական մարդկանց անսասան վստահության մասին՝ կանխելու պատերազմը և պաշտպանելու խաղաղության գործը։

Կամպանիայի սկզբից մինչև նոյեմբերի 15-ը խաղաղության Համաշխարհային խորհրդի Դիմումի տակ ստորագրել են 117,669,320 սովետական քաղաքացիներ։

Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումի տակ ստորագրությունների հավաքումը ՍՍՌՄ-ում անցավ քաղաքական ու աշխատանքային վիթխարի վերելքի իրադրության մեջ։ Բազմաթիվ ժողովներում, միտինգներում, կոնֆերանսներում սովետական մարդիկ հայտարարեցին Սովետական կառավարության խաղաղասիրական արտաքին քաղաքականությանը իրենց լիակատար հավանության և հաստատակամ պաշտպանության մասին, բոլոր երկրներում խաղաղության կողմնակիցների հետ իրենց համերաշխության մասին։ Սովետական մարդիկ արտահայտեցին իրենց կոչը իմպերիալիստական պետությունների կառավարող շրջանների ագրեսիվ գործողությունների դեմ, որոնք ձգտում են պանձագերծել նոր համաշխարհային պատերազմ, և պահանջեցին դադարեցնել ամերիկյան ինտերվենցիան Կորեայում, արգելել ատոմային զենքը, կրճատել սպառազինությունները, խաղաղության պակտ կնքել հինգ մեծ տերությունների միջև։

Խաղաղության Համաշխարհային խորհրդի Դիմումի տակ ստորագրությունների հավաքումը սովետական մարդիկ նշանավորեցին խաղաղ աշխատանքի ասպարեզում ձեռք բերված նոր հաջողություններով՝ սովետական պետության, որպես ամբողջ աշխարհի խաղաղության պատվարի, հզորության հետագա ամրապնդման նպատակով։

Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումի տակ ՍՍՌՄ-ում ստորագրությունների հավաքման կամպանիայի արդյունքները վկայում են սովետական ժողովրդի բուռն խանդավառության մասին, բոլոր ժողովուրդների հետ համագործակցելու, խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու նրա անսասան կամքի մասին։ Բոլոր երկրներում խաղաղության կողմնակիցները հանձին սովետական ժողովրդի հուսալի դաշնակից ունեն խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար մղվող մեծ պայքարում։

Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումի տակ ՍՍՌՄ-ում ստորագրությունների հավաքման կամպանիայի հաջող ավարտումը, որին մասնակցեցին բոլոր քաղաքացիները՝ սկսած 16 տարեկան հասակից, հանդիսանում է սովետական ժողովրդի միասնության, իր կառավարության, բոլշևիկյան պարտիայի շուրջը, խաղաղության մեծ դրոշակակիր ընկեր Ստալինի շուրջը նրա համախմբվածության վառ ցուցադրումը։